DOI: 10.54503/1829-4324.2025.1-233

ԴԵԻՆԴՈՒՍՏՐԱԼԻԶԱՑԻԱՅԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը ստացվել է՝ 05.03.25, ուղարկվել է գրախոսման՝ 28.04.25, երաշխավորվել է տպագրության՝11.07.25

ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ներածություն: Հետխորհրդային ժամանակաշրջանում (1990-ականներ) երկրի կառավարության վարած տնտեսական քաղաքականությունը հիմք հանդիսացավ բացասական գործընթացների ձևավորման և ամրապնդման համար: ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո տեղի ունեցած սեփականաշնորհումն իր բնույթով աննախադեպ էր, քանի որ դրա նպատակը ոչ թե ձեռնարկությունների արդյունավետության բարձրացումն էր, այլ հասարակության տնտեսական հիմքերի փոփոխությունը: Սեփականաշնորհման անբարենպաստ հետևանքների թվում հարկ է հատկապես նշել արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկությունների ոչնչացումը, արտահանման ապրանքային կառուցվածքի փոփոխությունը և ընդհանրապես արտաքին առևտրի խորը անկումը:

Հոդվածում վերլուծվում են արդյունաբերականացման և ապաարդյունաբերականացման գործընթացների նշանակությունն ու դերը Հայաստանի տնտեսության զարգացման գործում, ինչպես նաև հիմնավորվում է վերաարդյունաբերականացման անհրաժեշտությունը՝ որպես հայրենական տնտեսության զարգացման նախապայման 21-րդ դարի մարտահրավերների պայմաններում:

Դեինդուստրալիզացիան հանգեցրեց արդյունաբերության քայքայման, գործազրկության, զանգվածային աղքատության, արտագաղթի, կրթության որակի անկման և այլն: Դեինդուստրալիզացիայի արդյունքում Հայաստանն արդյունաբերական զարգացած երկրից վերածվեց հումք արտահանող երկրի: Բնականաբար արդյունաբերականացումը ցանկացած երկրի զարգացման հիմքն է, և անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ-ն մշակի և կիրառի վերաարդյունաբերականացման ծրագիր, ինչն էլ պայմանավորում է **հետազոտության արդիականությունը**:

Հոդվածի **նպատակն է** հետազոտել դեինդուստրիալիզացիայի գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, դրանց առաջացման պատճառները և հետևանքները, ինչպես նաև հիմնավորել ռեինդուստրիալիզացիայի անհրաժեշտությունը երկրի տնտեսությունում: Հետազոտության **խնդիրն է** ուսումնասիրել դեինդուստրիալիզացիայի հատկանիշները ՀՀ-ում:

Գրականության վերլուծություն: Դեինդուստրիալիզացիայի և ռեինդուստրիալիզացիայի հետ կապված խնդիրները XXI դարի 20-ական թվականների ամենաարդիական ուսումնասիրությունների առարկա են դարձել ոչ միայն արևմտյան, այլ նաև ռուս հետազոտողների համար, ինչի արդյունքում,

հրատարակվել են բազմաթիվ հետազոտական աշխատանքներ: Հատկապես անհրաժեշտ է նշել Ջ. Ռիֆկինի, Ս. Հեյլմենի, Ա. Մալմբերգի, Պ. Մարշի, Ս. Գլազևի, Օ. Սուխարյովի, Ա. Կոլգանովի, Ս. Բոդրունովի, Վ. Լոպատինի, Վ. Լապինի, Վ. Գեեցի, Ե Կոտովի, Ռ. Գրինբերգի, Մ. Մուսինի, Ս. Գուբանովի, Ա. Ամոսովի, Վ. Միրոնովի, Ա. Օբուխովիչի, Ի. Ֆրոլովի, Բ. Տիտովի, Մ. Շպիգելի, Վ. Օկրեպիլովի, Բ. Կուզնեցովի, Լ. Մինդելի և ուրիշների հետազոտությունները:

Օ. Ս. Սուխարյովը դեինդուստրիալիզացիան սահմանում է հետևյալ կերպ. «Ապաարդյունաբերականացումը պետք է հասկանալ որպես հակառակ գործընթաց, երբ արտադրությունը ոչ թե պարզապես կրճատվում է, այլ երբ այն դառնում է ավելի պարզունակ, կորցնում է իր տեխնոլոգիական մակարդակը, ոչնչացվում է արտադրական ենթակառուցվածքը, կրճատվում են ֆոնդերը, իջնում է մեքենայացման և ավտոմատացման մակարդակը, ինչպես նաև ընդհանուր տեխնոլոգիական մակարդակը, նվազում է արտադրական գործառնությունների բարդությունը, կրճատվում է արտադրության ինտելեկտուալ (մտավոր) բազան[1]»:

Վ.Ի.Բարխատովը գտնում է, որ դեինդուստրիալիզացիան ենթադրում է արդյունաբերական արտադրանքի մասնաբաժնի կայուն անկում երկրի ազգային եկամտում, որն ուղեկցվում է համապատասխան ճյուղերում աշխատողների թվի նվազմամբ:, այսինքն՝ այս հասկացությունը ինդուստրիալիզացիայի հակառակ երևույթն է[2]:

Ինչպես տեսնում ենք երկու հեղինակներն էլ դեինդուստրիալիզացիան համարում են ինդուստրիալիզացիայի հակառակ երևույթ: ԵՎ եթե Օ. Ս. Սուխարյովը սահմանման մեջ հիմնական շեշտը դնում է արդյունաբերության ոլորտում արձանագրվող բացասական երևույթների վրա, ապա Վ.Ի.Բարխատովը՝ երկրի ազգային եկամտում ընթացող բացասական երևույթների վրա:

Իսկ միջազգային տեսանկյունից դիտարկումը ներկայացված է արդեն հոդվածում՝ «Կեյնկրոսսի և Լևերի դեինդուստրիալիզացիայի 4 հատկանիշներ» բնորոշմամբ, որը համաշխարհային մակարդակով դեինդուստրիալիզացիայի ամենահայտնի և ամենից շատ կիրառվող բնորոշումն է:

Մեթոդաբանություն: Հետազոտությունն առավել ամբողջական դարձնելու նպատակով կիրառվել են դիտարկման, համեմատության, վիճակագրական վերլուծության, ընդհանրացման և աղյուսակային վերլուծության մեթոդները:

Վերլուծություն: 1985 թվականի մարտին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար ընտրվեց Մ. Գորբաչովը և երկիրը ճգնաժամային վիճակից դուրս բերելու

[1] Сухарев О. С. 2013. Экономическая политика реиндустриализации России: возможности и ограничения // Национальные интересы: приоритеты и безопасность. № 24(213). С. 12.

[2] Бархатов, В. И. 2016. Тренды развития производительных сил в России // Вестн. Челяб. гос. ун-та. —— № 11 (393). — С. 53.

նպատակով նա փորձեց կատարել տնտեսական-քաղաքական բարեփոխումներ[3]: Հայ հասարակության մեծ մասն ակտիվորեն պաշտպանում էր բարեփոխումներ իրականացնելու գաղափարը: Նրանք հույսով և լավատեսությամբ ակնկալում էին փոփոխություններ դեպի լավը և պատրաստ էին հաղթահարել առաջացած դժվարությունները: Սակայն շատ շուտով բարեկեցիկ կյանքի վառ սպասումները վերածվեցին խորը հիասթափությունների: Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը շատ արագ տապալվեց և Հայաստանում խորացավ տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի ճգնաժամը, որին շուտով գումարվեցին նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, Սպիտակի երկրաշարժի աղետալի հետևանքները, հաղորդակցության ուղիների և տնտեսական շրջափակման ծանր իրողությունը, էկոլոգիական կամ բնապահպանական իրավիճակով պայմանավորված մի շարք գործարանների փակումը, սեփական էներգակիրների բացակայությամբ պայմանավորված էներգետիկ ճգնաժամը, գոյատևման տարրական միջոցներից զրկված հազարավոր փախստականների առկայությունը և այլն:

1992 թվականի հունվարից Հայաստանը սկսեց անցումը շուկայական հարաբերությունների, որի համար ընտրվեց «շոկային թերապիայի» մեթոդը[4]: Բնականաբար բարեփոխիչների կարծիքով սա այն մեթոդն էր, որը պետք է երկիրը շատ արագ դուրս բերեր խորը ճգնաժամից: Նրանք համոզված էին նաև, որ շուկան ինքնուրույն, առանց պետական կարգավորման, տնտեսությունը դուրս կբերի ստեղծված ճգնաժամից: Բարեփոխիչները վստահեցնում էին, որ այդ ամբողջ գործընթացը կտևի մի քանի ամիս, որից հետո կլինի գնանկում, կվերանա ապրանքային դեֆիցիտը, կկայունանա տնտեսությունը, իսկ վերջնարդյունքում երկրում ձևավորված շուկայական հարաբերությունները կբարելավեն մարդկանց կյանքը:

Ազատական բարեփոխումների ծրագիրը նախատեսում էր սեփականաշնորհում, պետական մենատիրության վերացում, գների և առևտրի ազատականացում:

Բարեփոխումների ամենակարևոր ուղղությունը գների ազատականացումն էր, որը ենթադրում էր ապրանքների և ծառայությունների ազատ գնագոյացում: Գների ազատականացումը սկսվեց 1992 թվականի հունվարից, որը հնարավորություն ընձեռեց տնտեսվարողներին իրենց վաճառած ապրանքների համար ինքնուրույն սահմանել գները[5]: Բացառություն

---

[3] Կատվալյան Մ.Ա. 2012, Հայոց պատմություն: Հիմսահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: ՈՒս ձեռնարկ: -Եր.; էջ 704

[4] Ղարիբյան Գ. 2017, Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմսախնդիրները.-Եր.: ԵՊՀ հրատ., էջ 51

[5] ՀՀ Գերագույն խորհրդի 1992 թվականի հունվարի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ազատ գների և սակագների համակարգին անցնելու մասին» N0 ՀՆ-0503-1 որոշում

էին կազմում որոշակի ապրանքներ, որոնց գների սահմանման ժամանակ պետք է իրականացվեր պետական կարգավորում: Սակայն շատ դեպքերում գների պետական կարգավորումն իրականացվում էր այնքան անարդյունավետ, որ հաճախ «վերահսկվող» գներն աճում էին նույնիսկ ավելի արագ, քան չվերահսկվողները:

Փաստ է, որ կառավարությունը ազատ գների ներդրմամբ ցանկանում էր վերացնել ապրանքների դեֆիցիտը և խթանել մրցակցությունը, սակայն հենց ապրանքների դեֆիցիտը և մրցակցության բացակայությունը հանգեցրեցին ապրանքների գների աննախադեպ աճի: Արդյունքում, 1992թ. դեկտեմբերին 1991թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների գներն աճեցին 32.5, ոչ պարենային ապրանքներին՝ 9.6, իսկ ծառայությունների սակագները՝ 21.0 անգամ[6]: 1993թ. նախորդ տարվա նկատմամբ ռուբլու միջին տարեկան փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ-ում ընկավ գրեթե 9 անգամ, իսկ սպառողական գների ինդեքսը 1993թ. դեկտեմբերին 1992թ. դեկտեմբերի համեմատ կազմեց 10996,2%[7]: 1994թ., 1990թ. համեմատ, ապրանքների և ծառայությունների սպառողական գներն աճեցին ավելի քան 22 հազար անգամ, այդ թվում, միայն ծառայություններինը մոտ 48 հազար անգամ[8]:

Առևտրի ազատականացումը պետք է արագացներ ապրանքաշրջանառությունը, հայրենական արտադրության և ներկրված ապրանքների իրացման համար ստեղծեր համապատասխան ենթակառուցվածքներ: Սակայն առևտրի ազատականացման հետևանքով սկսվեց ներմուծվող էժան սպառողական ապրանքների հոսքը դեպի հայրենական շուկա, պետության կողմից չիրականացվեց պրոտեկցիոնիզմի (հովանավորչության) քաղաքականություն, ինչն էլ հանգեցրեց հայրենական արդյունաբերության փլուզմանը:

Մինչ բարեփոխումների սկիզբը Հայաստանը զարգացած արդյունաբերական երկիր էր, որի տնտեսության մեջ գլխավոր դերը պատկանում էր արդյունաբերությանը: Ըստ տարբեր աղբյուրների այդ տարիներին

---

[6]ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների, Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ., Գների սակագների փոփոխություններ, https://armstat.am/file/article/tntbar_91_98a_11.pdf, վերջին մուտքը՝ 25.04.2025թ.

[7]ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների,Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը,1996, Հայաստանի տնտեսական վիճակը և սոցիալական բարեփոխումները 1996թ. դրությամբ, https://armstat.am/file/article/bednost_1.pdf, վերջին մուտքը՝ 25.04.2025թ.

[8] ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների, Հայաստանի ազգային հաշիվները,1990-1997, 1990-1997 թվականների ազգային հաշիվների համակարգի ցուցանիշների վերլուծություն, https://armstat.am/file/article/azghashiv_90_97_5.pdf, վերջին մուտքը՝ 25.04.2025թ.

արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում կազմում էր 68-ից[9] մինչև 74%[10], իսկ այս թվերը խոսում են այն մասին, որ մեր հանրապետությունը խորհրդային ժամանակահատվածի վերջերում բարձր զարգացած արդյունաբերական երկիր էր: Արդեն 1990թ. ՀՀ-ում գործում էր 767 խոշոր ձեռնարկություն[11]: Խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանն աչքի էր ընկնում պտուղների, բանջարեղենի, կոնյակի, գինու, հանքային ջրերի, պահածոների արտադրությամբ, սակայն հիմնականում մասնագիտացված էր էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական մեքենաշինության, հաստոցաշինության և գործիքաշինության, ատոմային էներգիայի, օրգանական քիմիայի, դեղագործության, թեթև արդյունաբերության բնագավառներում: Հայաստանի տնտեսությունը ամբողջովին կախված էր էներգակիրների և հումքի բազմաթիվ տեսակների ներկրումից (թողարկվող արտադրանքի 70 %-ի հումքը ներկրվում էր, իսկ պատրաստի արտադրանքի 60 %-ը՝ արտահանվում): Հայկական ՍՍՀ-ում թողարկվում էր ամբողջ ԽՍՀՄ-ի արդյունաբերության համախառն արտադրանքի 1,3 տոկոսը[12]: Հայկական արտադրանքն արտահանվում էր արտասահմանյան ավելի քան 80 երկիր[13]:

Բնակարանների և պետական ձեռնարկությունների սեփականաշնորհումը նպատակ ուներ սեփականատեր դարձնել խորհրդային մարդուն, ինչպես նաև վերջինիս մոտ ձեռնարկատիրությամբ զբաղվելու ցանկություն արթնացնել: Արմատական բարեփոխումների նախնական փուլում բարեփոխիչների մոտ ձևավորվել էր այն կարծրատիպը, որ պետական գույքը հայտնվելով մասնավորի ձեռքերում կվերածվի գերհզոր ուժի, ինչն էլ ինքնաբերաբար կապահովի արտադրության արդյունավետություն և տնտեսական աճ (սակայն անվիճելի փաստ է, որ պետական գույքը հայտնվելով մասնավորի ձեռքում վերջինիս ինքնաբերաբար չի կարող դարձնել արդյունավետ սեփականատեր):

1992 թվականի օգոստոսին ընդունվեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և

---

[9]Մելքումյան Ս. 2005Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն.-Եր.: Զանգակ-97,.էջ 114,

[10]Ղարիբյան Գ. 2011.Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում.-Եր.: ԵՊՀ հրատ., էջ 23

[11] ՀՀ ՎԿ կայքէջ, 25.04.2025թ.Տարեգրքեր, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1990, Արդյունաբերություն, https://armstat.am/file/doc/99539138.pdf, վերջին մուտքը՝

[12] Վալեսյան Լ.Հ. 1988, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր.-Լույս, էջ 164

[13]Մելքումյան Ս. 2005. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն.-Եր.: Զանգակ-97, էջ 115

ապապետականացման մասին» օրենքը[14], և հանրապետությունում սկսվեց սեփականաշնորհման գործընթացը: Իրականացվեց հապճեպ և զանգվածային սեփականաշնորհման քաղաքականություն, ինչն էլ հանգեցրեց բազմաթիվ բացասական հետևանքների՝ ձեռնարկությունները աներևակայելի ցածր գներով վաճառվեցին մասնավորին (համաձայն պաշտոնապես հրապարակված տարբեր աղբյուրների տվյալների, միայն 800000 ԱՄՆ դոլարով «սեփականաշնորհվել» է հանրապետության տնտեսության կեսից ավելին, ավելի ճիշտ՝ 55 %-ը[15]): Սեփականաշնորհման արդյունքում համաժողովրդական սեփականությունը շատ արագ հայտնվեց մի խումբ անձանց ձեռքում (հանրապետության ընտանիքների ընդամենը 8 %-ը տիրացավ մասնավորեցված գույքի ավելի քան 90 %-ին, ինչի հետևանքով, 2000 թ.-ի դրությամբ առավել հարուստ ընտանիքների 4-5 %-ը տնօրինում էր ողջ ազգային հարստության առնվազն կեսին[16]): Նոր սեփականատերերի մեծ մասը չուներ մասնագիտական գիտելիքներ, կառավարման անհրաժեշտ փորձ, շրջանառու միջոցներ, շատ դեպքերում ձեռնարկությունները շահագործելու ցանկություն և հնարավորություն: Բազմաթիվ սեփականատերերի միակ ցանկությունը արագ հարստանալն էր, ինչն էլ բերեց նրան, որ թանկարժեք սարքավորումները (ջարդոնի անվան տակ) և մետաղական պաշարները, ինչպես նաև ձեռնարկությունների մեծ մասն ամբողջական կամ մաս-մաս վերավաճառվեցին այլ երկրների: Արդյունաբերության արդիականացման և սեփականաշնարհման անվան տակ ՀՀ-ում իրականացվեց դեինդուստրիալիզացիա, ինչի արդյունքում հիմնովին քայքայվեց երկրի արդյունաբերությունը: Բնականաբար, այս ամենը հանգեցրեց գործազրկության, աղքատության և աննախադեպ արտագաղթի: Երբեմնի արդյունաբերական հանրապետությունը հետ մղվեց զարգացման իր դիրքերից և վերածվեց ագրարային երկրի: 1990-ական թվականների սկզբներին Հայաստանի Հանրապետությունը լիովին կորցրեց իր արտաքին և ներքին շուկաները:

Այս ամենը խոսում է այն մասին, որ միջազգային փորձագետների կողմից խոստացած «ժողովրդական կապիտալիզմը» Հայաստանում տապալվեց, իսկ հայ հասարակության մեծ մասի երազանքները հօդս ցնդեցին: Բնակչության մի ստվար զանգվածը «սպառողական դրախտում» հայտնվելու փոխարեն շատ արագ հայտնվեց աղքատության ճիրաններում: 1996թ. վերջին հանրապետությունում առկա էին 1,7 – 1,8 մլն. աղքատներ, որոնցից 800-900

[14] Կատվալյան Մ.Ա. 2012, Հայոց պատմություն: Հիմսահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: ՈՒս ձեռնարկ: -Եր.; էջ 771

[15] ՀովսեփյանՎ.Ե.2000, Սեփականաշնորհման մեխանիզմի կատարելագործման մի քանի հարցեր // «Բանբեր Երևանի համալսարանի», Եր. № 2(101), էջ 223

[16] Կատվալյան Մ.Ա. Եր.; 2000, Հայոց պատմություն: Հիմսահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: ՈՒս ձեռնարկ: - էջ 465

հազարը շատ աղքատ էին, կամ կարող ենք փաստել, որ բնակչության 28%-ը շատ աղքատ էր, 27%-ը՝ աղքատ, իսկ 45%-ը՝ ոչ աղքատ[17]:

Ըստ Կեյնկրոսսի և Լևերի դեինդուստրիալիզացիան ենթադրում է արդյունաբերական արտադրանքի ծավալների և արդյունաբերության մեջ զբաղվածների թվի անընդհատ նվազում, արդյունաբերական արտադրությունից անցում ծառայությունների արտադրությանը, երկրի արտահանման կառուցվածքում արդյունաբերական արտադրանքի ծավալների կրճատում, որի արդյունքում ստեղծվում է առևտրային հաշվեկշռի պակասուրդ, իսկ վերջինիս

երկարաժամկետ պահպանումը հանգեցնում է ներմուծման համար վճարելու անհնարինության[18]:



Գծապատկեր 1. ՀՆԱ դինամիկան ՀՀ-ում 1990-1996թթ.(1990թ.-ի համեմատ) [19]

1990-1994թթ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ՀՆԱ-ի արտադրության կտրուկ անկում (ավելի քան 53%) և միայն 1994թ. գրանցվել է որոշակի աճ: ՀՆԱ-ի աճի տեմպը 1994-1998թթ. ընթացքում կազմել է 131,7% կամ միջին տարեկան 6,4%: Սակայն հարկ է նշել, որ ՀՆԱ-ի մակարդակը 1998թ.-ին հասել է 1990թ.-ի մակարդակի ընդամենը 61%-ին[20]:

Կարճ ժամանակահատվածում էապես նվազեցին ապրանքների արտադրության ծավալները բնեղեն արտահայտությամբ: Այսպես, 1997թ.-ին 1985թ.-ի համեմատ ավտոմեքենաների արտադրությունը նվազեց 496 անգամ,

---

[17] ՀՀ ՎԿ կայքէջ, 1996, Հրապարակումներ ըստ տարիների,Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Աղքատությունը Հայաստանում, https://armstat.am/file/article/bednost_3.pdf, վերջին մուտքը՝ 25.04.2025թ.

[18] Cairncross, A. 1982. What is deindustrialization? / A. Cairncross // Deindustrialisation / ed. F. Blackaby. —London : Pergamon,— P. 5—17

[19]Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ կայքէջի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը,1996» հրապարակման տվյալները, https://armstat.am/file/article/bednost_1.pdf,

[20] ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների, Տնեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ., Մակրոտնտեսություն, հիմնական բնութագրական փոփոխություններ, https://armstat.am/file/article/tntbar_91_98a_1.pdf, վերջին մուտքը՝ 25.04.2025թ

լուսավորման լամպերինը՝ 193 անգամ, մետաղահատ հաստոցներինը՝ 30.5 անգամ, գուլպա-նասկեղենինը՝ 56.5 անգամ, թղթինը՝ 540 անգամ, կենցաղային էլեկտրաարդուկներինը՝ 100 անգամ, ժամացույցներինը՝ 43 անգամ, երշիկեղենինը՝ 610 անգամ և այլն:

Աղյուսակ 1

Որոշ արտադրատեսակների արտադրությունը բնեղեն արտահայտությամբ 1985-1997թթ.[21]

	1985թ.	1990թ	1995թ	1996թ	1997թ	1997թ 1985թ նկատմամբ, %
Ավտոդողեր, 1000 հատ	2153	1009	93	73	0.1	0.0
Լուսավորման լամպեր, 1000 հատ	185905	99235	29413	16043	963.0	0.5
Մետաղահատ հաստոցներ, հատ	14850.0	8559.0	449.0	459.0	487.0	3.3
Ավտոմեքենաներ, հատ	13392.0	9410.0	232.0	114.0	27.0	0.2
Թուղթ, տոննա	15120	7526	88.0	-	28.0	0.2
Գուլպա-նասկեղեն, մլն.հատ	90.4	63.9	3.0	7.1	1.6	1.8
Ժամացույցներ,1000 հատ	4763.0	2999.0	393.0	285.0	112.0	2.3
Լվացքի մեքենաներ, 1000 հատ	82.6	109.6	0.5	-	-	0.0
Կենցաղային էլեկտրաարդուկներ, 1000 հատ	600.0	447.0	41.0	22.0	6.0	1.0
Ալյուր, 1000 տոննա	393.0	366.7	265.0	155.6	142.9	36.4
Ձավարեղեն, 1000 տոննա	14.5	8.3	3.1	1.4	0.9	6.2
Մակարոնեղեն, 1000 տոննա	14.3	17.5	2.9	0.7	0.4	2.8
Երշիկեղեն, տոննա	26215	20899	166.0	21.1	43.0	0.2
Աղ, 1000 տոննա	190.3	117.2	32.8	26.4	22.6	11.9
Կենդանական յուղ, տոննա	390.0	472.0	26.0	11.0	11.0	2.8

Մեքենաշինությունը կարևոր դեր է խաղում ցանկացած երկրի տնտեսության մեջ: Խորհրդային Հայաստանի արդյունաբերության

[21] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ կայքէջի Արդյունաբերություն 1998, հրապարակման, Արդյունաբերության արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրությունը հատվածի տվյալները, https://armstat.am/file/article/prom_6.pdf,

կառուցվածքում առաջատար դերը պատկանում էր հենց մեքենաշինությանը: 1970-1988թթ. ՀՀ-ում մեքենաշինության արտադրանքի ծավալն աճել է 3.1 անգամ, իսկ ԽՍՀՄ-ում՝ 2.4: Հայաստանի մեքենաշինության արտադրանքի 95 %-ից ավելին ուղարկվում էր Սովետական Միության մյուս հանրապետություններ և ավելի քան 40 արտասահմանյան երկրներ[22]: Եթե 1987-1990 թթ.–ին մեքենաշինության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալում կազմում էր ավելի քան 32 %, ապա հետագա տարիներին այն անշեղորեն նվազել է: Մասնավորապես, 1995թ.-ին այն կազմում էր 13,5 %, 1998 թ.-ին՝ 4,7 %[23]:

Աղյուսակ 2

Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1985-2023թթ.[24]

Ճյուղեր	1985	1990	1995	2000	2015	2020	2021	2022	2023
Արդյունաբերություն	67.1	59.2	24.3	23.7	16.3	20.0	19.8	18.6	16.5
Գյուղատնտեսություն	12.6	11.7	40.8	25.1	17.2	11.4	11.4	10.1	8.5
Առևտուր և ծառայություններ	6.5	6.9	28.2	39.8	46.8	50.8	51.3	54.1	57.3

Քանի որ ԽՍՀՄ-ի ժամանակաշրջանում հանրապետության տնտեսության առաջատար ճյուղը արդյունաբերությունն էր, ուստի վերջինիս մասնաբաժինը հասարակական ամբողջական արդյունքի մեջ 1985թ. կազմում էր 67.1%[25]: Սակայն ինչպես երևում է աղյուսակ թիվ 1-ի տվյալներից հետագա տարիների ընթացքում արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում հիմնականում նվազել է: Այսպես, 1985 թ.-ի համեմատ արդյունաբերության տեսակարար կշիռը 1995թ.-ին կրճատվել է 2.8 անգամ, իսկ 2023 թ.-ին՝ 4,1 անգամ:

Թիվ 2 աղյուսակից պարզ երևում է, որ նշված ժամանակահատվածում հանրապետության ՀՆԱ-ում արդյունաբերության տեսակարար կշռի նվազումն

---

[22] Ավետիսյան Կ.Մ., Ավետիսյան Ա.Ա., Երևան, 1979, Հայրենագիտական էտյուդներ: «Սովետական գրող» հրատարակչություն, էջ 66

[23]Մելքումյան Ս. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն.-Եր.: Զանգակ-97, 2005 էջ 137

[24]Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ կայքէջի Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, տարեգրքերի և Հայաստանի ազգային հաշիվները, 1990-2001, հրապարակման տվյալները, https://armstat.am/file/doc/99539078.pdf, https://armstat.am/file/doc/99510948.pdf, https://armstat.am/file/doc/99552468.pdf, https://armstat.am/file/article/sns-iii.2.pdf,

[25] ՀՀ ՎԿ կայքէջ, Տարեգրքեր, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1990, Ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր տնտեսական ցուցանիշները, https://armstat.am/file/doc/99539078.pdf, վերջին մուտքը՝ 25.04.2025թ.

ուղեկցվել է առևտրի և ծառայությունների ոլորտի տեսակարար կշռի աճով: Այսպես, եթե 1985 թ.-ին արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում էր 67,1 %, իսկ առևտրի և ծառայությունների ոլորտը՝ 6,5 %, ապա 2023 թ.-ին՝ համապատասխանաբար 16,5 % և 57,3 %, ընդ որում, առևտրի և ծառայությունների ոլորտի նմանատիպ աճը տեղի է ունեցել ոչ թե արդյունաբերության զարգացման և աճի հիման վրա, այլ՝ վեջինիս հաշվին:

Աղյուսակ 3

ՀՀ արդյունաբերությունում զբաղվածների միջին տարեկան թվաքանակը և տեսակարար կշիռը 1985-2023թթ.[26]

Տարիներ	Տնտեսությունում զբաղվածների միջին տարեկան թվաքանակը, հազար մարդ	Արդյունաբերությունում զբաղվածների միջին տարեկան թվաքանակը, հազար մարդ	Արդյունաբերությունում զբաղվածների տեսակարար կշիռը, %
1985	1354.9	453.2	33.4
1990	1630.1	494.8	30.4
1995	1476.4	302.9	20.5
2000	1277.7	179.7	14.1
2005	1097.8	134.6	12.3
2010	1185.2	120.6	10.2
2015	1072.6	120.8	11.3
2020	1052.4	145.7	13.8
2023	1174.4	155.9	13.3

Թիվ 3 աղյուսակի տվյալները հստակ ցույց են տալիս դեինդուստրիալիզացիայի բացահայտ ընթացքը, ինչպես նաև վերջինիս բացասական հետևանքները ՀՀ տնտեսության համար: Մասնավորապես, եթե 1990 թ.-ին տնտեսության մեջ զբաղվածների միջին տարեկան թիվը կազմում էր 1630.1 հազար մարդ (որը ՀՀ-ի համար գրանցված ամենաբարձր ցուցանիշն է), ապա 2023 թ.-ին՝ ընդամենը 1174.4 հազար մարդ: 1990 թ.-ին արդյունաբերության մեջ զբաղվածների միջին տարեկան թիվը կազմում էր 494.8 հազար մարդ, իսկ 2023 թ.-ին՝ ընդամենը 155.9 հազար մարդ (կրճատվել է 3,2 անգամ): Եթե

[26]Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ կայքէջի Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թվականին, https://armstat.am/file/doc/99507078.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1995-1996, https://armstat.am/file/doc/99506968.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001, https://armstat.am/file/doc/99452273.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006, https://armstat.am/file/doc/474.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, https://armstat.am/file/doc/99471438.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, https://armstat.am/file/doc/99499388.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, https://armstat.am/file/doc/99541258.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2024, https://armstat.am/file/doc/99552423.pdf, տարեգրքերի տվյալները,

արդյունաբերության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը 1985 թ.-ին կազմում էր ամբողջ տնտեսությունում զբաղվածների 33.4 %, ապա 2023 թ.-ին՝ ընդամենը 13.3 %:

Աղյուսակ 4

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 1990-2023թթ.[27]

(մլն.ԱՄՆ դոլար)

Տարիներ	Արտաքին առևտրի շրջանառություն	Արտահանում	Ներմուծում	Առևտրային հաշվեկշիռ
1990	4666.4	2001.5	2664.9	-663.4
1991	2413.1	896.1	1517.0	-620.9
1992	288.8	82.9	205.9	-123.0
1993	410.4	156.2	254.2	-98.0
1994	609.3	215.5	393.8	-178.3
1995	944.8	270.9	673.9	-403.0
2000	1182.6	297.5	885.1	-587.6
2005	2775.6	973.9	1801.7	-827.8
2010	4789.9	1041.0	3748.9	-2707.9
2017	6334.6	2237.6	4097.0	-1859.4
2020	7120.1	2536.9	4583.2	-2046.3
2021	8378.2	3016.0	5362.2	-2346.2
2022	14194.9	5419.1	8775.8	-3356.7
2023	21309.9	8552.0	12757.9	-4205.9

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մեջ արտահանումը գերազանցում էր ներմուծմանը, իսկ 1990 թվականից սկսած՝ գերակշռում է ներմուծումը: Թիվ 4 աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ մեր երկիրը արտահանման 1990 թ.-ի մակարդակին կարողացավ վերադառնալ միայն 2017 թ.-ին:

ԽՍՀՄ-ի տարիներին Հայաստանից հիմնականում արտահանվում էին բարձր արժեք ներկայացնող արտադրատեսակներ, իսկ ներմուծում էին առավելապես հումքատեսակներ և կիսաֆաբրիկատներ: Եվ եթե այն ժամանակ արտահանվող արտադրատեսակների մեջ գերակշռում էին մեքենաշինության (շուրջ 25 %), թեթև արդյունաբերության, սննդի, քիմիական արդյունաբերության,

[27]Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ կայքէջի Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում, 1991-1998 թթ..https://armstat.am/file/article/tntbar_91_98a_2.pdf, Հայաստանը թվերով, 2006 https://armstat.am/file/article/armenia_06_14.pdf, Հայաստանը թվերով, 2011 https://armstat.am/file/article/armenia_11_15.pdf, Հայաստանը թվերով, 2021, https://armstat.am/file/article/armenia_2021_14-artaqin.pdf, Հայաստանը թվերով, 2024, https://armstat.am/file/article/armenia_2024_14.pdf, հրապարակումների տվյալները

գունավոր մետաղաձուլության արտադրատեսակները[28], ապա այժմ՝ հանքահումքային արտադրանքը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները և դրանցից իրերը, պատրաստի սննդի արտադրանքը:

Իսկ սա արդեն Վանեկ-Ռայներտի էֆեկտն է, որը ենթադրում է, որ եթե երկիրն ազատականացնում է իր արտաքին առևտուրն այնպիսի պայմաններում, երբ արդյունաբերությունը դեռևս չի կարողանում հաջողությամբ մրցակցել համաշխարհային շուկայի այլ մասնակիցների հետ, ապա ավելի զարգացած երկրները մեծացնում են իրենց մասնագիտացումը արդյունաբերության գիտելիքատար ճյուղերում, իսկ ավելի քիչ զարգացած երկրները՝ պարզունակ (հումքի արդյունահանում, գյուղատնտեսություն և այլն):

Եզրակացություն: Պետության առաջընթացի հիմքը զարգացած արդյունաբերությունն է, իսկ ծառայությունների ոլորտը չի կարող փոխարինել վերջինիս: ՀՀ տնտեսության այսօրվա վիճակի հիմքում ընկած է 90-ական թվականներին իրականացրած դեինդուստրիալիզացիան: Այն իր հետ բերեց ոչ միայն տնտեսական, այլ նաև ազգային անվտանգության, մշակութային և սոցիալական լուրջ խնդիրներ՝ աղքատություն, արտագաղթ, կրթության որակի անկում և այլն: Այսօրվա մարտահրավերները պահանջում են Հայաստանի ազգային շահերը հաշվի առնող և ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված արդյունաբերության զարգացում՝ ռեինդուստրիալիզացիա: Ուստի, զարգացման ներկա փուլում պետության առաջնահերթ խնդիրն է ռեինդուստրիալիզացիայի ծրագրի մշակումը և իրականացումը, ինչպես նաև հայրենական արտադրանքի ներքին համախառն պահանջարկի խթանումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Գերագույն խորհրդի 1992 թվականի հունվարի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ազատ գների և սակագների համակարգին անցնելու մասին» N⁰ ՀՆ-0503-1 որոշում,
2. Ավետիսյան Կ.Մ., Ավետիսյան Ա.Ա., Երևան, 1979, Հայրենագիտական էտյուդներ: «Սովետական գրող» հրատարակչություն, 325 էջ
3. Կատվալյան Մ.Ա. Հայոց պատմություն: -Եր.; 2000Հիմնահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: ՈՒս ձեռնարկ:, 488 էջ
4. Կատվալյան Մ.Ա. Հայոց պատմություն: -Եր.; 2012, Հիմնահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: ՈՒս ձեռնարկ: 874 էջ
5. Հովսեփյան Վ. Ե. Եր. 2000, Սեփականաշնորհման մեխանիզմի կատարելագործման մի քանի հարցեր // «Բանբեր Երևանի համալսարանի», № 2(101), էջ 223-225

[28]Մելքումյան Ս. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն.-Եր.: Զանգակ-97, 2005.- էջ 217

6. Ղարիբյան Գ. 2017, Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները.-Եր.: ԵՊՀ հրատ., 340 էջ
7. Ղարիբյան Գ. 2011,Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում.-Եր.: ԵՊՀ հրատ., 142 էջ
8. Մելքումյան Ս. 2005. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն.-Եր.: Զանգակ-97, 445 էջ
9. Վալեսյան Լ.Հ. 1988, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր.-Լույս, 456 էջ,
10. Бархатов, В. И. — 2016. Тренды развития производительных сил в России // Вестн. Челяб. гос. ун-та.— № 11 (393). — С. 51—57
11. Сухарев О. С. 2013. Экономическая политика реиндустриализации России: возможности и ограничения // Национальные интересы: приоритеты и безопасность. № 24(213). С. 1–24
12. Cairncross, A. 1982. What is deindustrialization? / A. Cairncross // Deindustrialisation / ed. F. Blackaby. —London : Pergamon,— P. 5—17
13. ՀՀ ՎԿ, https://armstat.am/am/

ԴԵԻՆԴՈՒՍՏՐԱԼԻԶԱՑԻԱՅԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում հիմնավորվում է հայրենական տնտեսության առկա վիճակի պատճառը՝ որպես Խորհրդային Միության փլուզման հետևանքով ստացած դեինդուստրիալիզացիայի հզոր հարվածի արդյունք: Արդյունքում՝ Հայաստանը կորցրեց տնտեսական կապերն ու արդյունաբերական արտադրության որոշ ճյուղերը, որոնք գործում էին Խորհրդային Միության տնտեսական համակարգում: Հոդվածում վերլուծվում են նաև արդյունաբերականացման և ապաարդյունաբերականացման գործընթացների նշանակությունն ու դերը Հայաստանի տնտեսության զարգացման գործում, ինչպես նաև հիմնավորվում է վերաարդյունաբերականացման անհրաժեշտությունը՝ որպես հայրենական տնտեսության զարգացման նախապայման 21-րդ դարի մարտահրավերների պայմաններում

Դեինդուստրալիզացիայի արդյունքում Հայաստանն արդյունաբերական զարգացած երկրից վերածվեց հումք արտահանող երկրի: Բնականաբար արդյունաբերականացումը ցանկացած երկրի զարգացման հիմքն է, և անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ-ն մշակի և կիրառի վերաարդյունաբերականացման ծրագիր, ինչն էլ պայմանավորում է **հետազոտության արդիականությունը**:

Հոդվածի **նպատակն է** հետազոտել դեինդուստրիալիզացիայի գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, դրանց առաջացման պատճառները և հետևանքները, ինչպես նաև հիմնավորել ռեինդուստրիալիզացիայի անհրաժեշտությունը երկրի տնտեսությունում:

Մեթոդաբանություն: Հետազոտությունն առավել ամբողջական դարձնելու նպատակով կիրառվել են դիտարկման, համեմատության, վիճակագրական վերլուծության, ընդհանրացման և աղյուսակային վերլուծության մեթոդները: **Ստացված հիմնական արդյունքները:** Ցանկացած պետության առաջընթացի հիմքը զարգացած արդյունաբերությունն է: Ուստի, այսօրվա մարտահրավերները պահանջում են Հայաստանի ազգային շահերը հաշվի առնող և ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված արդյունաբերության զարգացում՝ ռեինդուստրիալիզացիա: Հետևաբար, զարգացման ներկա փուլում պետության առաջնահերթ խնդիրն է ռեինդուստրիալիզացիայի ծրագրի մշակումը և իրականացումը, ինչպես նաև հայրենական արտադրանքի ներքին համախառն պահանջարկի խթանումը:

Բանալի բառեր. դեինդուստրիալիզացիա, ռեինդուստրիալիզացիա, դեինդուստրիալիզացիայի հատկանիշներ, ռեինդուստրիալիզացիայի ծրագիր, արդյունաբերություն, մեքենաշինություն, սեփականաշնորհում, Վանեկ-Ռայներտի էֆեկտ, առնտրային հաշվեկշիռ:

ОТРИЦАТЕЛЬНЫЕ ПОСЛЕДСТВИЯ ДЕИНДУСТРИАЛИЗАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

НАИРА САРГСЯН

Аннотация

В статье обосновывается текущее состояние национальной экономики как следствие мощного удара деиндустриализации, вызванного распадом Советского Союза. В результате Армения утратила экономические связи и ряд отраслей промышленного производства, функционировавших в рамках советской экономической системы. В статье анализируется значение и роль процессов индустриализации и последующей деиндустриализации в развитии экономики Армении, а также обосновывается необходимость реиндустриализации как предпосылки развития национального хозяйства в условиях вызовов XXI века.

Вследствие деиндустриализации Армения из индустриально развитой страны превратилась в экспортёра сырья. Очевидно, что индустриализация является основой развития любого государства, поэтому Республика Армения должна разработать и реализовать программу реиндустриализации, что и определяет актуальность настоящего исследования.**Цель статьи** – исследовать процессы деиндустриализации в Республике Армения, выявить причины и последствия этих процессов, а также обосновать необходимость реиндустриализации в национальной экономике.

Методология:Для обеспечения комплексности исследования применялись методы наблюдения, сравнения, статистического анализа, обобщения и табличного анализа.

Основные результаты: Основой прогресса любого государства является развитая промышленность. Современные вызовы требуют развития промышленности в Армении, основанной на современных технологиях и учитывающей национальные интересы — то есть проведения реиндустриализации. Следовательно, на данном этапе развития приоритетной задачей государства должна стать разработка и реализация программы реиндустриализации, а также стимулирование внутреннего совокупного спроса на отечественную продукцию.

Ключевые слова. деиндустриализация, реиндустриализация, характеристики деиндустриализации, программа реиндустриализации, промышленность, машиностроение, приватизация, эффект Ванека-Райнерта, торговый баланс.

THE NEGATIVE CONSEQUENCES OF DEINDUSTRIALIZATION IN THE REPUBLIC OF ARMENIA

NAIRA SARGSYAN

Abstract

This paper examines the current state of Armenia's national economy as a direct consequence of a profound deindustrialization shock following the collapse of the Soviet Union. The disintegration of the Soviet economic system severed Armenia's industrial ties and led to the dismantling of several key sectors that had previously operated within that framework. The paper explores the historical significance of industrialization and the subsequent impact of deindustrialization on Armenia's economic trajectory. It further argues that reindustrialization is not only necessary but also a fundamental prerequisite for sustainable national development in the context of 21st-century challenges. The deindustrialization process has effectively transformed Armenia from an industrially developed republic into a raw material-exporting economy. Given that industrialization constitutes the backbone of long-term national progress, the study underscores the urgent need for Armenia to design and implement a comprehensive reindustrialization strategy. These imperative forms the basis for the article's relevance and research objectives.

The aim of the study is to analyze the processes of deindustrialization in the Republic of Armenia, identify its underlying causes and socio-economic consequences, and substantiate the strategic necessity of reindustrializing the Armenian economy. To ensure analytical rigor and breadth, the research employs a variety of scientific methods, including observation, comparative analysis, statistical evaluation, generalization, and tabular representation of data.

A robust and technologically modern industrial sector is essential for national development. The study concludes that Armenia must prioritize the creation and implementation of a reindustrialization policy that aligns with contemporary technological standards and national economic interests. Stimulating domestic aggregate demand for domestically produced goods should be a cornerstone of this strategy. At the current juncture, reindustrialization represents a critical policy direction for ensuring Armenia's long-term economic resilience and growth.

Keywords: deindustrialization, reindustrialization, characteristics of deindustrialization, reindustrialization program, industry, machine engineering, privatization, Vanek-Reynert effect, trade balance.